# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հեղինակ՝ **Էդգար Էլբակյան**

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն իր արդի տեսքով փաստացիորեն սկզբնավորվել է նախքան Հայաստանի անկախության հռչակումն ու կայացումը, ավելին՝ կառուցվածքային ու ինքնութենակերտիչ առումով ընկած է անկախացման գործընթացի ու անկախության հիմքում: Բնական է, որ թե՛ որպես արտաքին քաղաքական խնդրակարգ, և՛ թե որպես գիտահետազոտական ուսումնասիրության առարկա՝ այն տասնամյակներ շարունակ զբաղեցնում է հայաստանյան հասարակության ուշադրությունը:

Սրանով հանդերձ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գիտական ուսումնասիրության դարակից պակասում են միջազգային հարաբերությունների գիտակարգի տեսական ապարատն ընդգրկող տեքստերը: Արտաքուստ զուտ նեղ մասնագիտական նշանակության այս հարցն իրականում ունի նաև ճանաչողական և մեկնողական կարևոր դեր, որ կարող է թույլ տալ կանխատեսել և/կամ կառավարել հակամարտության ընթացքը:

Միջազգային հարաբերությունների՝ հետսովետական տարածքի (այդ թվում՝ Հարավային Կովկասի) պետությունների արտաքին քաղաքականությունը բացատրող ամենամրցունակ տեսություններից է նոր ռեալիզմը (կառուցվածքային ռեալիզմ)[1]: Ի տարբերություն դասական ռեալիզմի մորգենթաուական ըմբռնումների՝ կառուցվածքային ռեալիզմը պետությունների՝ իրար հանդեպ ունեցած վախն ու քաղաքականությունը բացատրում է երեք գործոնով՝ միջազգային կյանքում կենտրոնական իշխանության բացակայությունը՝ անարխիան, պետությունների՝

[1] Տե՛ս օրինակ **Wong Ka Ho**, *Structural realism and the New Cold War*, Hong Kong, 2015, https://commons.ln.edu.hk/cgi/viewcontent.cgi?referer=https://www.google.com/&httpsredir=1&article=1008&context=socsci_fyp (հղվել է 03.04.2019 թ.):



© Էդգար Էլբակյան

որոշակի ռազմական հզորություն ունենալը, և մեկը մյուսի մտադրությունների մասին հստակություն չունենալու պարագան, որոնց արդյունքում պետությունները համարում են, որ ավելի շատ ուժը մեծացնում է գոյատևման շանսերը[2]: Ըստ էության, նոր ռեալիզմի հետևորդներն այսօրինակ բացատրության առանցքում դնում են միջազգային հարաբերությունների անարխիկ կառուցվածքը (այստեղից էլ՝ տեսության երկրորդ անունը՝ «կառուցվածքային ռեալիզմ»)՝ ի տարբերություն դասական ռեալիզմի, որի հիմքում նկատելի են կենսաբանական դետերմինիզմին բնորոշ տարրեր, այն է՝ միջազգային հարաբերությունների բնույթի ուղիղ կապ մարդկային էության ու բնազդների հետ[3]: Փաստացի նոր ռեալիզմի տեսությունը դետերմինիստական դեր է հատկացնում միջազգային հարաբերությունների կառուցվածքին՝ որպես պետությունների վարքը պայմանավորող գործոնի՝ պնդելով, որ այդ կառուցվածքը չի կարող ձևափոխվել անգամ պետությունների ներսում ընթացող փոփոխությունների արդյունքում՝ անկախ վերջիններիս բնույթից ու ծավալից[4]: Այդ կառուցվածքը հանդես է գալիս որպես շրջանակավորող կապանք, որը ձև է հաղորդում սուբյեկտների արտաքին քաղաքականությանը և որն ըստ սահմանման «ճեղքել» հնարավոր չէ:

Եթե վերոբերյալ տեսական հիմնադրույթները տարածենք Հայաստանի արտաքին քաղաքականության, այդ թվում՝ խոսքի առարկա ենթաոլորտի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վրա, ապա ընդհանրություններն առավել քան ակնհայտ են: Այսպես, միջազգային հարաբերությունների **անարխիկ բնույթը**, որ նոր ռեալիզմի առանցքն է, այս դեպքում կերպավորվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հիմնական պարամետրերի չմիջազգայնացվածությամբ: Առաջին հերթին նկատի ունենք «գետնի վրա» խաղաղապահների և կողմերի ռազմական վարքը պայմանավորող արտաքին զսպող գործոնների գրեթե լիակատար բացակայությունը: Կատարելապես բացակայում են նաև ռազմական էսկալացիայի կամ ագրեսիվ հռետորաբանության դեպքում

[2] **Mearsheimer J. John**, *The Tragedy of Great Power Politics*, New York, ISBN 0393020258, էջ 3:
[3] **Morgenthau J. Hans**, *Politics Among Nations: The Struggle For Power and Peace*, New York, 1948, էջք 4; 8-9:
[4] **Waltz N. Kenneth**, *Structural Realism after the Cold War*, International Security. 25 (1), doi: 10.1162/016228800560372, էջ 10:

միջազգային պատժամիջոցների կամ առնվազն դրանց սպառնալիքի մեխանիզմներն ու հիշատակումները: Հակամարտության նմանօրինակ կառուցվածքին և կողմերի անզիջումայնությանը նպաստում են նաև Արցախի տեղագրական առանձնահատկությունները, որոնց պայմաններում առանցքային կարևորության մի քանի աշխարհագրական կետերի հանդեպ ռազմական վերահսկողությունը շղթայաբար հանգեցնում է քննարկվող ամբողջ տարածքի հանդեպ տիրապետության:

Ինչ վերաբերում է պետությունների՝ միմյանց հանդեպ **անվստահության և անկանխատեսելի «սև արկղ»** լինելու պարագային, որ բանաձևված է նոր ռեալիզմի մտածող Ջոն Միրշայմերի մոտ[5], ապա դա հայ-ադրբեջանական երկկողմ ընկալման և բանակցությունների վերաբերյալ դոմինանտ դիսկուրսի անբաժանելի նարատիվն է, որ առնվազն թեմային քիչ թե շատ քաջատեղյակ լսարանի մոտ մանրակրկիտ ներկայացման ու հիմնավորման կարիք չի հարուցում: Վերոգրյալից էլ արդեն հետևում է տեսական հաջորդ դրույթի առարկայացումը՝ **սպառազինությունների երկկողմ մրցավազքը**՝ որպես միջոց ադրբեջանական կողմի համար հարցի ռազմական լուծման փորձերի (հարձակողական նեոռեալիզմ (անգլ.՝ offensive neorealism))[6] և հայկական կողմի համար՝ սեփական անվտանգ գոյությունը պահպանելու համար (պաշտպանողական նեոռեալիզմ (անգլ.՝ defensive neorealism)):

---

[5] **Mearsheimer J. J.**, Նշ. աշխ.:

[6] Միայն 2019 թ. առաջին եռամսյակում Ադրբեջանի Հանրապետության նախագահի կայքում տեղ գտած պաշտոնական հրապարակումներում «ուժային գործոն» (ադրբ.՝ «güc amili») բառակապակցությունը՝ որպես անարխիկ միջազգային համակարգում Լեռնային Ղարաբաղի հարցի՝ ադրբեջանական տեսանկյունից կարգավորման դիսկուրսիվ արտահայտություն հանդիպում է երեք անգամ, իմա՝ ամսական մեկ անգամ միջինացված պարբերականությամբ (տե՛ս Şəhid ailələri ilə görüşdə İlham Əliyevin nitqi (Իլհամ Ալիևի ելույթը զոհված զինծառայողների ընտանիքների հետ հանդիպմանը - *ադրբեջաներեն*), president.az, 29.01.2019 թ., https://president.az/articles/31680 (հղվել է 03.04.2019 թ.); İlham Əliyev Real TV-yə müsahibə verib (Իլհամ Ալիևը հարցազրույց է տվել «Ռեալ ԹՎ»-ին - *ադրբեջաներեն*), president.az, 12.02.2019 թ., https://president.az/articles/31826 (հղվել է 03.04.2019 թ.)): Իսկ 2019 թ. ապրիլի 2-ին, խոսելով հատուկ նշանակության ուժերի զորամասի անձնակազմի առաջ, Իլհամ Ալիևը նույն ռազմական համաշարում հինգ անգամ հիշատակել է «ուժ» բառարմատը (տե՛ս Müdafiə Nazirliyinin Xüsusi Təyinatlı Qüvvələrinin N saylı hərbi hissəsində İlham Əliyevin nitqi (Իլհամ Ալիևի ելույթը պաշտպանության նախարարության հատուկ նշանակության ուժերի N զորամասում - *ադրբեջաներեն*), president.az, 02.04.2019 թ., https://president.az/articles/32565 (հղվել է 03.04.2019 թ.)):

Ահա այս կառուցվածք-ստրուկտուրան է պատճառը, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում առնվազն «ռեալպոլիտիկի»՝ կոնկրետ քայլերի ու մոտեցումների մակարդակով հայաստանյան չորս ղեկավարներն ու վերնախավերը չեն որդեգրել խիստ ու էականորեն տարբերվող քաղաքականություն: Վերոնշյալն, անշուշտ, արտաքին երևութական համընկնումների շարք չէ, այլ տեսական շրջանակներում արված շատ համառոտ օրինակային ուսումնասիրություն (անգլ.՝ case study):

Այսու, միգուցե հենց նոր ռեալիզմի և հայ-ադրբեջանական հարաբերությունների, ի մասնավորի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ մեկ տեսական դպրոցի հիմնադրույթների շրջանակներում այսչափ դյուրին բացատրությունն է պատճառը, որ լայն տեսական բանավեճ այս հարցի շուրջ չի ծագել: Այնուամենայնիվ, մենք անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև առնվազն երկու այլ տեսության՝ լիբերալիզմին կամ լիբերալ ինտերնացիոնալիզմին և կոնստրուկտիվիզմին:

Լիբերալիզմի տեսությունը գաղափարական ուղղակի հակասության ու վեճի մեջ է ռեալիզմի դպրոցի հետ: Այսպես, լիբերալիզմը արմատապես հերքում է ռեալիզմի առաջ քաշած պատերազմա-անվտանգային բովանդակային բազան և ուժային քաղաքականությունը՝ որպես միջազգային հարաբերությունների միակ արդյունք: Փոխարենը լիբերալիզմի մտածողները շեշտադրում են միջազգային հարաբերություններում փոխադարձ շահի և համագործակցության, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և ոչ կառավարական/հասարակական դերակատարների այն վճռորոշ դերակատարումը, որ ունենում են վերջիններս պետությունների արտաքին քաղաքականության ձևավորման վրա[7]:

Լիբերալիզմի տեսության կարևոր կատեգորիաներից է փոխկախվածության (անգլ.՝ interdependence) հասկացությունը՝ որպես կոնֆլիկտկանխարգելիչ գործոն[8]: Առաջին հերթին խոսքը տնտեսական գործակցության (ազատ շուկա) ու մշակութային/արժեքաբանական փոխառնչությունների միջոցով գոյացող փոխկախվածության մասին է, որն ըստ լիբերալ մտածողների՝ ոչ օպտիմալ է դարձնում

[7] **Shiraev B. Eric**, *International Relations*, New York, 2014, էջ 78:
[8] Նույն տեղում, էջ 88:

պատերազմական ստրատեգիան: 1980-ական թվականների վերջին, 1990-ական թվականների սկզբին՝ հասարակական գիտություններում մաթեմատիկական գործիքակազմի, ի մասնավորի՝ խաղերի տեսության ակտիվ ներթափանցման շրջանում, այս փաստարկի օգտին հայտնվեցին նաև քանակական ապացույց-մոդելավորումներ[9]:

Եվ, իհարկե, լիբերալիզմի տեսության անկյունաքարերից է դեմոկրատական խաղաղության գաղափարը՝ մշակված Իմանուիլ Կանտի կողմից, որը պնդում է, որ լիբերալ ժողովրդավարությունները, ներքին կյանքի բարքերը տարածելով նաև արտաքին հարաբերությունների վրա, միմյանց դեմ չեն պատերազմում[10]: Այս տեսության ժամանակակից ներկայացուցիչների հիմնական փաստարկները հանգում են նրան, որ ժողովրդավարությունների առաջնորդները հաշվետու են իրենց ընտրողների առաջ հնարավոր պատերազմական կորուստների համար, և նաև ժողովրդավարական հասարակության անդամները հարևան համակարգի ներկայացուցիչներին չեն դիտում՝ որպես թշնամի[11]:

Վերն ասվածից արդեն իսկ պարզ է, որ այս տեսությունը սակավ նյութ կարող է ընձեռել մեզ՝ բացատրելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում որևէ կողմի արտաքին քաղաքականությունը: Այնուամենայնիվ, հակամարտության շուրջ առկա է լիբերալ դիսկուրսի նշանակալի բաղադրատարր, որ, դեռևս հայաստանյան նախկին իշխանությունների օրոք տարերայնորեն զարգանալով, ներկայումս ավելի դիտարժան նշանակություն է ձեռք բերել՝ կապված Հայաստանի նոր վերնախավի շատ ներկայացուցիչների՝ լիբերալ ժողովրդավարական արժեքներին հետևելու մասին հանրային հավաստիացումների:

Այսպես՝ լիբերալիզմի տեսության ոգուն համահունչ դիսկուրս են բաղկացնում «ժողովրդավարական Արցախը չի կարող լինել բռնապետական Ադրբեջանի կազմում»[12]

---

[9] *Liberalism in International Relations*, International Encyclopedia of Political Science, Los Angeles, 2011, էջ 1437, http://www.stefanorecchia.net/1/137/resources/publication_1040_1.pdf (հղվել է 03.04.2019 թ.):
[10] Նույն տեղում, էջք 1434-1435:
[11] Թերևս այս ծիրում է պետք տեղավորել ԼՂ բանակցային դիսկուրսում միջնորդների կողմից «ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու» կոչ-թեզը:
[12] Տե՛ս օրինակ ԱՄՆ-ում ԼՂՀ ներկայացուցիչ **Ռոբերտ Ավետիսյանի** պատասխան նամակը՝ ուղղված նույն երկրում Ադրբեջանի դեսպանին (*A Response to Azerbaijan*, The New York Times, 29.01.2015 թ.,

և «եթե Ադրբեջանում (էլ) հաստատվի ժողովրդավարական ռեժիմ, հակամարտության լուծումը կհեշտանա» նարատիվները:

Լիբերալիզմի տեսական բացատրությունների ծիրում տեղավորվող հայտարարությունը, որ հայկական կողմից արվել է ամենաբարձր մակարդակում, հեղափոխական իշխանափոխությամբ վարչապետ նշանակված Նիկոլ Փաշինյանի հետևյալ միտքն է, որ հնչեցվել է ՀՀ ԱԺ ամբիոնից 2018 թ. նոյեմբերի 1-ին. «*Ղարաբաղի հարցի ցանկացած կարգավորում պետք է լինի ընդունելի Հայաստանի ժողովրդի համար, Արցախի ժողովրդի համար և, այո՛, պետք է ընդունելի լինի նաև Ադրբեջանի ժողովրդի համար… Կա՞ արդյոք Ադրբեջանում պաշտոնյա, ով պատրաստ է կրկնել նույն հայտարարությունը, բառացի նույն նախադասությունը ասել, որ Ղարաբաղի հարցի ցանկացած կարգավորում պետք է ընդունելի լինի Ադրբեջանի ժողովրդի համար, … Ղարաբաղի ժողովրդի համար և Հայաստանի ժողովրդի համար: Եթե կա պաշտոնյա, որ կարող է կրկնել այս նախադասությունը, կարող ենք իրոք խոսել, որ … կա հնարավորությունների պատուհան (*հակամարտության լուծմանը հասնելու – Է.Է.*): Իսկ եթե չկա այսպիսի հայտարարություն … անող քաղաքական գործիչ, մենք պետք է դեռ շարունակենք փնտրել, թե ինչ նկատի ունեն մեր (*միջազգային – Է.Է.*) գործընկերները՝ ասելով՝ «կա հնարավորությունների պատուհան»*»[13]: Հետագայում՝ 2019 թ. մարտի 12-ին, Ստեփանակերտում Հայաստանի և Արցախի Հանրապետությունների անվտանգության խորհուրդների համատեղ նիստի ժամանակ Ն. Փաշինյանը հղում է կատարել իր այս հայտարարությանը՝ պարզաբանելով, որ «*Սա իմ ներդրումն էր ոչ միայն Հայաստանի ու Արցախի, այլև Ադրբեջանի ժողովրդին խաղաղության նախապատրաստելու գործում: Ցավոք, Ադրբեջանի նախագահի կողմից մենք համարժեք հայտարարություններ, քայլեր չենք տեսնում: Չնայած սրան՝ պատրաստ եմ շարունակել երկխոսությունը ոչ միայն*

---

https://www.nytimes.com/2015/01/29/opinion/a-response-to-azerbaijan.html (հղվել է 03.04.2019 թ.)); ինչպես նաև ԼՂՀ ԱԺ փոխխոսնակ **Արթուր Թովմասյանի** հարցազրույցը հայկական պետական «Արմենպրես» լրատվագործակալությանը (*Ժողովրդավարական Արցախը չի կարող գոյատևել բռնատիրական Ադրբեջանի կազմում. ԼՂՀ ԱԺ փոխխոսնակ*, Արմենպրես, 06.05.2013 թ., https://armenpress.am/arm/news/717950/ (հղվել է 03.04.2019 թ.)):

[13] *Նիկոլ Փաշինյանը՝ Ղարաբաղի հարցի մասին*, CivilNet յութուբյան ալիք, 01.11.2018 թ., https://www.youtube.com/watch?v=H-jLIMg4tMU&t=146s (հղվել է 03.04.2019 թ.):

*Ադրբեջանի նախագահի, այլև Ադրբեջանի ժողովրդի հետ, որովհետև համոզված եմ՝ Ադրբեջանի ժողովուրդը խաղաղասեր է նույնքան, որքան Հայաստանի ժողովուրդը, որքան Արցախի ժողովուրդը*»[14]:

Բացի դիսկուրսի ու նարատիվների մակարդակից՝ գործնական առումով նույնպես հայկական կողմից փորձեր են արվել լիբերալիզմի տեսությանը բնորոշ վարք դրսևորել: Այսպես, ինչպես վերը նշել ենք, լիբերալիզմի հետևորդները հավատում են, որ պետությունները կարող են համատեղ ջանադրությամբ մեծացնել իրենց հարստությունն ու բարօրությունը և միաժամանակ դրանով նվազեցնել հարաբերություններում կոնֆլիկտայնությունը[15]: Եվ ահա՝ արցախյան կողմը պարբերաբար հանդես է եկել հայտարարություններով, որ պատրաստ է **փոխշահավետ համագործակցության** գնալ ադրբեջանական կողմի հետ՝ վերջինիս սեզոնային ամիսներին ջուր տրամադրելով Սարսանգի ջրամբարից՝ Թարթառ գետից[16]՝ փոխարենը ստանալով նավթամթերք[17]: Այս առաջարկությունը, որ կարող էր հակամարտությունից զատ հարաբերությունների այլ ասպարեզ (դոմեյն) կերտել կողմերի միջև և դառնալ փոխկախվածության օրինակ, երբեք չի ընդունվել ադրբեջանական կողմից: Փոխարենը, Սարսանգի ու Ադրբեջանի մերձհայկական տարածքների ջրային հիմնախնդիրների հարցն Ադրբեջանի կողմից տնօրինվել է դարձյալ նույն հակամարտային տրամաբանությամբ[18]:

Երրորդ ամենակիրառական և քննարկվող նյութի շրջանակներում հետաքրքրական տեսությունը կոնստրուկտիվիզմն է: Վերջինս, սկզբունքորեն չհերքելով

---

[14] *Նիկոլ Փաշինյանի խոսքը Հայաստանի և Արցախի Անվտանգության խորհուրդների համատեղ նիստում*, Government of Armenia յութուբյան ալիք, 12.03.2019 թ., https://www.youtube.com/watch?v=JIBSWHI5S44&t=537s (հղվել է 03.04.2019 թ.)

[15] **Shiraev B. Eric**; **Zubok M. Vladislav**, *International Relations*, New York, 2014, էջք 75-92:

[16] *Ղարաբաղյան կողմը բազմիցս է հայտարարել, որ պատրաստ է Ադրբեջանին տրամադրել ջրային պաշարներ. Բաբայան*, aysor.am, 13.06.2016 թ., https://www.aysor.am/am/news/2016/06/13/դավիթ-բաբայան/1097155 (հղվել է 03.04.2019 թ.):

[17] *ՕՐԱԿԱՐԳ 22.03.2019*, Artsakh Public TV յութուբյան ալիք, 22.03.2019 թ., https://www.youtube.com/watch?v=rxQjOj_G1ak&t=34m53s (հղվել է 03.04.2019 թ.):

[18] Տե՛ս Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 2085 բանաձևը, որ այս հարցում ադրբեջանական դիվանագիտության տարիների հետևողական աշխատանքի արդյունք էր (*Inhabitants of frontier regions of Azerbaijan are deliberately deprived of water, Resolution 2085 (2016)*, Council of Europe, Parliamentary Assembly, http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=22429&lang=en (հղվել է 03.04.2019 թ.)):

միջազգային հարաբերությունների ստրուկտուրալ բնույթն ու դրա դետերմինիստական նշանակությունը, էական ներդրում է բերում միջազգային հարաբերությունների տեսության մեջ՝ այդ բնույթը պայմանավորելով ոչ թե որպես «ի բնե տրված» ու անփոփոխ մեծություն, այլ սոցիալապես կառուցարկվող (socially constructed)՝ միջազգային կյանքի շահակենտրոն վարքակերպային բացատրությունից անցում կատարելով նորմակենտրոն բացատրության[19]: Կառուցարկման առանցքում, որպես միջազգային հարաբերությունները բաղկացնող սյուներ, այս տեսությունը դնում է շահի, ինքնության ինքնընկալումը: Ըստ այս տեսության՝ միջազգային հարաբերություններն ու պետությունների արտաքին քաղաքական վարքը կերպավորվում են՝ որպես սոցիալական փոխհաղորդակցության, նորմերի ու արժեքների փոխանցման դրսևորում, իսկ ազգային շահերը՝ ոչ թե որպես «բարձրագույն ռացիոնալ մեքենա» հանդիսացող պետության կողմից դուրսբերվող կոնստանտ մեծություն, այլ կառուցարկվող փոփոխական:

ԼՂ հակամարտության համաշարում այս տեսությունն էական է այնքանով, որ ըստ էության, երկու կողմից էլ հակամարտությունը հաղթելու և Արցախի տարածքի՝ ազգային շահի ու ինքնության մեջ ունեցած դերը տարիների ընթացքում կառուցարկյալ է ինչպես «ներքևից վերև», այնպես էլ «վերևից ներքև» ուղղություններով: Մյուս կողմից՝ առնվազն Հայաստանի օրինակով, որտեղ, ի տարբերություն Ադրբեջանի[20], սոցիոլոգիական, այդ թվում՝ դաշտային հետազոտությունները հնարավոր ու առկա են, պարզ տեսանելի է, որ շահի ու ինքնության ընկալումները՝ կապված ԼՂ հիմնախնդրի հետ, դինամիկ փոփոխության մեջ են: Այսպես, եթե դիտարկելու լինենք Արցախի ազատագրված

---

[19] Տե՛ս **Դավիդ Դեսլերի** գրախոսությունը **Մարթա Ֆիննեմորի** «*Ազգային շահերը միջազգային հասարակությունում*» գրքի մասին (American Journal of Sociology, Vol. 103, No. 3 (November 1997), էջ 786, https://pdfs.semanticscholar.org/e87d/d1fdabaead61e99371e8e2628d67a1eec8c3.pdf (հղվել է 03.04.2019 թ.)):

[20] Հայտնի քաղաքական պատճառներով Ադրբեջանում այս գիտակարգը փաստացիորեն արգելված և չգո է: Նշենք, որ սա, ինչպես նաև հայաստանյան հանրության շրջանում (փոխ)զիջումների հանդեպ տրամադրությունների խստացման և վերնախավի համանման ընկալումների միջև առկա դրական կայուն առնչակցության (անգլ.՝ positive correlation) պատճառահետևանքայնությունը հարցազրուցային կամ գիտական այլ մեթոդով ապացուցելը մեր հետազոտության սահմանափակումներից են (անգլ.՝ research limitations):

տարածքների դերը հայկական շահի ու ինքնության ինքնընկալման մեջ, ապա կնկատենք, որ փոխվել է թե՛ դրանց հանդեպ ընկալումը («թուրքի հողից»[21] մինչև «ազատագրված հայրենիք»), թե՛ քաղաքական ճակատագրի հանդեպ մոտեցումը («հանձնենք՝ անկախության դիմաց»-ից մինչև «ոչ մի թիզ հող»[22]): Ըստ որում, գործ ունենք տարածքների ոչ միայն ազգագրական-ժողովրդագրական յուրացման, այլև «քաղաքական հայաֆիկացման» հետ, ինչն ակնհայտ է դառնում ոչ միայն հանրային խոսույթի ու պատումների մասնակցային հետազոտությունից, այլև սոցիոլոգիական հարցումներում Արցախի ազատագրված նախկին հինգ և յոթ շրջանների զիջման պատրաստակամության միջև եղած տոկոսային չնչին տարբերությունից[23]:

Այս տեսության կարևորությունը պայմանավորում ենք նրանով, որ, ինչպես պատմական փորձն է ցույց տալիս, այսօրինակ հակամարտություններում ժամանակային հեռանկարը թույլ է տալիս զրոյական հաշվով խաղի (անգլ.՝ zero-sum game) տրամաբանության մեջ պարտված համարվող կողմին աստիճանաբար հաշտվել առկա իրողությունների հետ[24]: Ըստ որում, անձնապես մեր հետազոտական դիրքորոշումն այն է, որ կարևորը հենց հասարակական մակարդակում տեղի ունեցող մտածողական ու ընկալումային փոփոխությունն է, որը վաղ թե ուշ չի կարող չփոխանցվել տվյալ

---

[21] Նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին հարակից ազատագրված տարածքների հանդեպ ինքնութենական ընկալումը, ըստ ականատեսների ու պատերազմի վետերանների վկայությունների, ի սկզբանե հենց այդպիսին էր: Տե՛ս օրինակ 1992 թ. դեկտեմբերի 10-ին ձայնագրված ազգագրական այս երգը, որում նախկին Ադրբեջանական ԽՍՀ Ղուբաթլուի շրջանի տարածքը կոչվում է «թուրքի հող»՝ https://www.facebook.com/ElbakeanEdgar/videos/2092809114098896/:

[22] 2004 թ.-ից մինչև 2017 թ. թե՛ ՀՀ-ում, թե՛ Արցախում անցկացված սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ թե՛ հասարակության, թե՛ քաղաքական/պետական գործիչների շրջանում ազատագրված տարածքների զիջումը՝ որպես ԼՂ հակամարտության լուծման եղանակ կամ մաս, ընդունելի տեսակետից աստիճանաբար վերածվել է մարգինալ մոտեցման: Այսպես, եթե 2004 թ.-ին հարցվածների 32.4% էր դեմ տարածքային զիջումներին, ապա 2017 թ.-ին՝ 86.4% (տե՛ս **Mikaelian Hrant**, *Societal Perceptions of the Conflict in Armenia and Nagorno-Karabakh*, Yerevan, 2017, էջ 28, http://c-i.am/wp-content/uploads/2017-Karabakh-Working-Paper.pdf (հղվել է 03.04.2019 թ.)): Տե՛ս նաև **IPSC – Institute for Political and Sociological Consulting**, *Opinion polls in Nagorno-Karabakh: Comparative results from 2015 and 2016*, Armenia, 2016, էջք 44; 49, http://eufoa.org/wp-content/uploads/2016/12/Comparative-opinion-polls_2015-2016_17.11.2016_Website_Eng-2.pdf (հղվել է 03.04.2019 թ.):

[23] **IPSC** …, Նշ. աշխ.:

[24] *[ԼԷՕԻ ԶՐՈՒՅՑՆԵՐ #1] Ա. Իսկանդարյանը ԼՂ հակամարտության ժամանակային չափման և զարգացման հեռանկարի մասին*, Leo Centre յութուբյան ալիք, 10.03.2019 թ., https://www.youtube.com/watch?v=jNq5EohUFRk (հղվել է 03.04.2019 թ.):

ժամանակվա վերնախավին: Ընկալումային նման փոփոխություններն ինչ-որ պահից կարող են ապալեգիտիմացնել/ապալեգիտիմացնում են պատերազմի միջոցով կորուսյալը հետ բերելու դիսկուրսն ու ռազմավարությունը:

**Եզրակացություն**: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը՝ որպես հետկայսերական-հետգաղութային իրականությանը բնորոշ երևույթ, ունի պատմաքաղաքական, իրավական, էթնիկ-ազգային և ռազմաաշխարհագրական բարդ բնույթ: Միջազգային միջնորդական ձևաչափով հարցը փոխզիջումների հիման վրա կարգավորելու ջանքերը կամ փորձերն անցնում են ապարդյուն, իսկ դրանց հեռանկարը խիստ մշուշոտ է:

Սույն հետազոտությամբ ցույց տվեցինք, որ միջազգային հարաբերությունների նոր ռեալիզմի տեսությունը լավագույնս է բացատրում ԼՂ հակամարտությունը թե՛ որպես միջազգային կյանքի մաս, թե՛ որպես հայկական և ադրբեջանական պետությունների արտաքին քաղաքականության առարկա: Միևնույն ժամանակ գիտական խնդրականը լիբերալիզմի և կոնստրուկտիվիզմի տեսական հայեցակետերի պրիզմայով անցկացնելիս համոզվեցինք, որ հակամարտության շուրջ թե՛ հասարակական, թե՛ բանակցային-դիվանագիտական դիսկուրսում առկա են տարրեր թե՛ առաջինից, թե՛ երկրորդից:

Հետազոտության հիման վրա մենք եկել ենք այն հիմնական եզրակացությանը, որ առկա վիճակով (պատկերավոր ասած՝ սույն աշխատանքի ստեղծման և գրման պահի դրությամբ) ԼՂ հակամարտությունը չունի այնպիսի լուծում, որ կբավարարի երկու կողմերին թե՛ վերնախավերի, թե՛ հասարակությունների մակարդակով, և հակամարտությունը շարունակում է երկուստեք ընկալվել որպես զրոյական հաշվով խաղ: Ըստ էության, մեր կողմից քննարկված առաջին երկու տեսություններից ոչ մեկն ինքն իրենով հակամարտության լուծման կանխատեսելի հեռանկար չի մատնանշում: Միայն կոնստրուկտիվիզմի տեսական ապարատն է, որ հիմք է տալիս կարծելու, որ հակամարտության փաստական ավարտը կարող է վրա հասնել, եթե կողմերից մեկի ընկալումներում Լեռնային Ղարաբաղ-Արցախի տարածքն ազգային ինքնության ու շահի

համակարգում դադարի ընկալվել այն աստիճանի կարևորությամբ, որպիսին ունի այսօր: Տեսականորեն դա հնարավոր է միայն Ադրբեջանի պարագայում՝ հաշվի առնելով վերջին քառորդ դարի պատմությունը, երբ Արցախը թե՛ ժողովրդագրական, թե՛ վարչական առումով դե-ֆակտո դուրս է եղել ադրբեջանական պետահիրավական ու հասարակական կենսագործունեության տիրույթից՝ փոխարենը ներառված լինելով հայկական/հայաստանյան իրականության մեջ:

**Ծանուցում**: Սույն հետազոտությունն իրականացվել և ներկայացվել է «:Բուն» գիտամշակութային հիմնադրամի և «Եվրասիա համագործակցություն հիմնադրամ» հիմնադրամի համատեղ կազմակերպած «Ղարաբաղյան հակամարտության բազմաձայնությունը» զեկուցումների շարքի շրջանակներում:

© Էդգար Էլբակյան